ներին խորհուրդ կտայ ստացած ուսմամբ բաւականանալու և ուսումնարանէն դուրս դալու։ Ամենէ ուսումնարանի դահլիճը, դիցուք թէ աշակերտներէն մէկը Ներականութեան առարկային կհոլովէ ինչ, ընչի, ընչիս (ստացուածք, եղած բան), նա իւր անձուոնի ազազակներով ուսումնարանը կդղրդեցնէ թէ՝ այդպէս չէ, այլ՝ ինչ, ընչու ևն. բեր Ներականութիւն, բեր բառարան, դիր առաջ, հարիւր անդամ ցոյց տուր, խօսիր, համոզիր, այնու ամենայնիւ չես կարող համոզել։ Նախանձոտն՝ երբ կկարդուի որ և իցէ պաշտօնի մէջ՝ խակոյն կսկսէ հասկացող և արժանաւոր անձինքը հալածել, անարդար հրամաններով նոցա սիրտը վիրաւորել, նոցա դլխու վրայ զանազան սպառնալիքներ որոտալ և իւր չարանախանձ կրից շանթեր և կայծակները թափել. իսկ ազէտներ և անհասկացողները պատուել, բարձրացնել, արժանաւորներէն նախատասել և նոցանից ստացած կաշառներով հարստութիւնը դիզել։ Նախանձոտն՝ բաղմարդիւն և գործունեայ իշխանաւորները կատէ, նոցա հետ կմաքառի, կհակառակի և կվիճէ, նոցա դէմ խաղաղ հասարակութեան մէջ խռովութիւն կյարուցանէ և նոցա օգտակար նպատակների կատարման խոչընդոտ կլինի։ Նախանձոտ մարդու համար լոյսը՝ խաւար է, խաւարը՝ լոյս է, բարին՝ չար է, չարն՝ բարի է։ Վերջապէս նախանձոտն՝ իւր եսական բընաւորութենէն ստիպուած՝ միանդամայն կցանկայ որ աշխարհիս ամեն երջանկութիւններ միայն իրեն սեպհականացնէ և միայն ինքն վայելէ, մինչև անդամ՝ եթէ հնար կլինի՝ արեգակին ևս կհրամայէ որ միայն իւր վերայ ծագէ լոյսը։

Այսպէս ահա եթէ նախանձ և ատելութիւն կթագաւորէ որ և իցէ հասարակութեան մէջ, անյտեղ ոչ մի բարի գործառնութեանց յառաջադիմութեան և բարեկարգութեան յոյս չկայ. իսկ ընդ հակառակն սէր և միաբանութիւնն ամեն դժուարութիւններին յաղթող է։ Ուրեմն մենք սրտով կցանկանք, որ այսպիսի դժոխային չարիքներն չտեսնուին իմ համաքաղաքացեաց մէջ և Երժ. Գրիգոր Վարդապետի առնեաբանութեան նպատակը արդիւնաւորուի։

Իսկ Խմբագրութենէդ կխնդրեմ այս համառօտ յօդուածիս անկիւն մի շնորհել Երարատ ամսագրոյ էջերում։

ՄՈՎՍԷՍ ՓԱՀԱՆԱՑ ՄԵԹՈՒԴԵԱՆՑ.

38՝ Սեպտեմբերի 1878 -դ.

Ի Գ. ԽԼԸՈ-Բ-Ն։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ

ԱՄՍԱԳԻՐ.

Անցեալ Յուլիս ամիսէն սկսեալ ի Տրիխս՝ Վրաստանի և Իմերէթի Հայոց վիճակին Թեմական Վերատեսուչ Մեծարգոյ Պ. Յակոբ Տէր-Յովհաննիսեանցի խմբագրութեամբ լոյս տեսաւ վերոյիշեալ ամսագիրը։

Յաջողութիւն մաղթելով կյուսամք որ Պ. Տէր-Յովհաննիսեանց կկարողանայ լրագրական ասպարէզում անկեղծ և ար-

զիւնաւոր հանդիսանալ և ըստ կոչմանն անսայթաք կգործէ և կյառաջադիմէ։

Յիշեալ թերթին վերայ մեր ընթերցողաց այսչափ տեղեկութիւն տալէ յետոյ՝ նոյն ամսագրոյ պարունակութեանց՝ պայմանաց և այլոց վերայ աւելի զաղափար ունենալ ցանկացողաց համար ահաւասիկ նոյն թերթին ծրագիրը ամբողջութեամբ հրատարակել արժան կհամարիմք։

«Ա. Դպրոցական խնդրի եւ ազգային դաստիարակութեան վերաբերեալ ՝՝՝